/Նախարարության անվանումը/

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **ԵՐԿԻՐ /ՔԱՂԱՔ / ԺԱՄԿԵՏ**

Թուրքիա, Ստամբուլ, 15.04-17.04.2019թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից հրավեր եմ ստացել մասնակցելու բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների (MICS) իրականացմանը նվիրված աշխատաժողովին:

Աշխատաժողովի նպատակն էր ներկայացնել բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների անցկացման փուլերը և գործիքները, ինչպես նաև բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների և ԿԶՆ ցուցանիշների կապերը մեծացնելու հարցեր:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

1. Բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների պլանավորման և ղեկավարման հարցեր.
2. ԿԶՆ ցուցանիշներ.
3. Բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների ռեսուրսներ.
4. Տվյալների հավաքագրում շարժական սարքերի օգնությամբ.
5. Բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների երեխաների, կանանց և տղամարդկանց հարցաթերթերի քննարկում.
6. Բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների տեխնիկական համագործակցության շրջանակներ.
7. Բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների որակի կառավարում
8. Դաշտային աշխատանքների իրականացում.
9. Տվյալների որակի ապահովում.
10. Տվյալների մշակում.

Աշխատաժողովի մասնակիցները ներկայացնում էին օրակարգի հարցերին վերաբերվող խմբային աշխատանքներ: Երկրների ներկայացուցիչները մասնակցում էին ընդհանուր և խմբային քննարկումներին՝ իրենց երկրների առանձնահատկությունները ներկայացնելու նպատակով:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Աշխատաժողովը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների անցկացման փուլերին և գործիքներին, ինչպես նաև տարբեր փուլերում առաջացող խնդիրներին:

Հայաստանի կառավարությունը շարունակում է առաջընթացի գնահատման աշխատանքները կայուն զարգացման նպատակների(ԿԶՆ) շրջանակներում: Բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունները լավ գործիք են ԿԶՆ որակյալ տվյալներ ունենալու համար: Այժմ բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների հարցաթերթերը պարունակում են ԿԶՆ անհրաժեշտ ցուցանիշների 45 տոկոսը, և աշխատանքներ են կատարվում այդ տոկոսը բարձրացնելու ուղղությամբ:

Աշխատաժողովի ժամանակ ներկայացվեցին ԿԶՆ ցուցանիշներին համապատասխանեցնելու նպատակով խիստ մեթոդաբանական և ճշգրտման աշխատանքները, որոնց միջոցով բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների հարցաթերթերը բարելավվել են ԿԶՆ ցուցանիշների տեսակետից: Աշխատաժողովը միջոց էր Հայաստանում բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտություն անցկացնելու հնարավորությունները գնահատելու համար:

- **ՆՇՈՒՄՆԵՐ**

Աշխատաժողովին մասնակցում էին տասնչորս երկրների՝ Հայաստանի, Բուտանի, Կոտ դ'Իվուարի, Սվազիլենդի, Ճամայկայի, Ղազախստանի, Կոսովոյի, Մալավիի, Մալայզիա, Մյանմայի, Նաուրուի, Սենթ Լյուսիայի, Եմենի և Ուզբեկստանի վիճակագրական գրասենյակների ներկայացուցիչներ, ինչպես նաև ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աշխատակիցներ:

Աշխատաժողովի հետ կապված բոլոր ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան